Արձանագրություն N 3
ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/015 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

«04» Մայիսի 2021թ.
ժ. 11:00

ք. Երևան

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Ազիզյանը,
Անդամներ՝ Արտակ Անդրեասյանը և Անդրամժնիկ Իսկանդարյանը.
Քարտուղար՝ Արթուր Բաղալյանը:

I. ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/015 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի մասին

Ընդունել ի գիտություն, որ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/015 ծածկագրով ընթացակարգի սույն թվականի ապրիլի 30-ի գնահատող հանձնաժողովի որոշման համաձայն «ՄԱՐՇԱԼ ՄԻԼԻԹԱՐԻ» ՍՊԸ-ին և «ԳԼԱՎՍՆԱԲ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ին առաջարկվել էր մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում «ՄԱՐՇԱԼ ՄԻԼԻԹԱՐԻ» ՍՊԸ-ն և «ԳԼԱՎՍՆԱԲ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ն շտկել են անհամապատասխանությունները, սակայն «ԳԼԱՎՍՆԱԲ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (Հավելված 1.1) 2-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքը չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝ հրավերի տեխնիկական բնութագրում նշված է, որ ապրանքները աշխատանքային ռեժիմում պետք է լինեն համատեղելի և իրար հետ աշխատեն առանց որևէ տեխնիկական շեղման, սակայն մասնակցի կողմից առաջարկվող SmartBuy ֆիրմայի S4, black մակնիշի խոսափողով անկանջակալները անհամատեղելի են հրավերի առաջին չափաբաժնով սահմանված ռացիայի տեխնիկական բնութագրի հետ, քանի որ ունեն ֆիզիկապես մեկ ինտերֆեյս 3,5 մմ, իսկ ռացիան ունի միացման 2 ինտերֆեյս այսինքն միկրոֆոնի մուտքը առանձին է և չի կարող օգտագործվել մեկ մուտքով:

II. Գնահատող հանձնաժողովի որոշման մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

ա) Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին որոշման 42-րդ կետը մերժել «ԳԼԱՎՍՆԱԲ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ–ի ներկայացված հայտը,

բ) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը չկայացած հայտարարել ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/015 ծածկագրով ընթացակարգի 2-րդ չափաբաժինը,

գ) ընտրված մասնակից ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «ՄԱՐՇԱԼ ՄԻԼԻԹԱՐԻ» ՍՊԸ-ին՝ 1-ին չափաբաժնի մասով,

դ) հաստատել էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը,

ե) անգործության ժամկետի ավարտից հետո ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում.

Կողմ՝ 3, դեմ՝ 0

Գնահատող հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա. Ազիզյան

գնահատող անդամներ՝ _____ Ա. Անդրեասյան

_____ Ա. Իսկանդարյան

քարտուղար՝ _____ Ա. Բաղալյան